ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/3

Երևան

«12» դեկտեմբեր 2017թ.

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմն, ի դեմս՝ **աշխատակազմի ղեկավար Տունե Խաչատրյանի**, որը գործում է նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **< Հայկական Ծրագրեր > ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գագիկ Սարգսյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (**հավելված N 3.1**) և հանձնման-ընդունման արձանագրության **2 (երկու)** օրինակ (**հավելված N 3**):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տաս)** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6700000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (**հավելված N 2**) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[ii]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4 (չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ	**< Հայկական Ծրագրեր > ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ**
Հ/Հ՝ 900011194157	**Հ/Հ՝ 1930030005130100**
ՀՎՀՀ՝ 02506264	**ՀՎՀՀ՝ 00807555**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 12» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	7221117 1/1	**ՀԾ-Ձեռնարկություն համակարգի Հաշվապահություն, Հիմնական միջոցներ և Ապրանքանյութական արժեքներ, Կադրեր, Աշխատավարձ ենթահամակարգերի ներդրումը 6 համակարգչի համար:** Համակարգի հետ տրամադրվում է պաշտպանական էլեկտրոնային բանալի, որը հանդիսանում է Համակարգի անբաժանելի մասը: Պաշտպանական էլեկտրոնային բանալին նախատեսված է՝ ա. համակարգի չարտոնված օգտագործումը կանխելու համար, բ. օգտագործողների քանակների լիցենզիաների ղեկավարման համար: ***Հաշվապահություն* ենթահամակարգի համառոտ նկարագրություն** *Հաշվապահություն ենթահամակարգը նախատեսված է* հաշվապահության սինթետիկ հաշվառումն ամփոփելու համար: Այն թույլ է տալիս վարել անալիտիկ հաշվառումներ ըստ գործընկերների, պայմանագրերի, բանկերի և հաշիվ-ապրանքագրերի: Նկարագրել ըստ առանձին օգտագործողների փաստաթղթերի ստեղծման, խմբագրման և ջնջման իրավասությունները: *Համակարգի հնարավորություններն են՝* • Դրամական միջոցների հաշվառում • Գնորդների հաշվառում՝ ըստ պայմանագրերի, հաշիվ/ապրանքագրերի և վճարման ժամանակացույցի • Մատակարարների հաշվառում՝ ըստ պայմանագրերի, հաշիվ/ապրանքագրերի և վճարման ժամանակացույցի • Այլ դեբիտորների/կրեդիտորների հաշվառում • Բազմակողմ ֆինանսական վերլուծություն • Ֆինանսական պլանավորում • Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում • Գործողությունների ամբողջական աուդիտ *Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝* • Դրամային և արտարժույթային հիշարար օրդերներ • Արտարժույթային մնացորդների վերագնահատման հանձնարարագրեր	դրամ	6700000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար)	1	**ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8**	**Պայմանագրի կնքման օրվանից մինչև 20.12.2017թ.**

		• Արտարժույթի փոխարկում • Դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ • Բանկային մուտքեր և ելքեր, վճարման հանձնարարականներ • Վաճառքի և գնման պայմանագրեր • Պայմանագրերի պլանավորված աշխատանքներ և վճարումներ • Պայմանագրերի փաստացի աշխատանքներ և վճարումներ • Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր • Կանխիկի և փոխանցման վճարման կարգադրություններ • Փոխմարման կարգադրություններ *Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝* • Մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով՝ ըստ կուտակիչ հաշվի, ըստ գործընկերոջ, ըստ հաշիվ-ապրանքագրերի և ըստ պայմանագրերի • Կոնկրետ հաշվի կամ գործընկերոջ շարժը - (T-հաշիվ), իսկ արտարժութային հաշվի համար նաև T-համարժեքը • Գործառնությունների մատյան դրամով և արտարժույթով • Կազմում է ֆինանսական հաշվետվության ձևերը (Ձև1 – Ձև5) ***Հիմնական միջոցներ* ենթահամակարգի համառոտ նկարագրություն** *Հիմնական միջոցներ համակարգը թույլ է տալիս* զուգահեռ վարել հիմնական միջոցների հարկային և հաշվապահական հաշվառումները: Այն թույլ է տալիս հաշվառել նաև կազմակերպության կողմից կառուցվող հիմնական միջոցները: *Համակարգի հնարավորություններն են՝* • Հիմնական միջոցների քարտարանի հաշվառում • Հիմնական միջոցների հետ բոլոր գործարքների գրանցում՝ ձեռքբերումից մինչև լուծարում • Մաշվածության հաշվարկ • Կապիտալ և ընթացիկ վերանորոգումների հաշվառում • Հիմնական միջոցների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում, գույքագրում • Փաստաթղթերի ստանդարտացված տպվող տեսքերի ստացում *Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝* • Ընդունման-հանձնման ակտեր • Ներքին տեղաշարժի փաստաթղթեր • Լուծարման ակտեր • Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր • Վերանորոգման և վերագնահատման կարգադրություններ • Կառուցման ծախսումներ • Գույքագրման տեղեկագրեր *Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝* • Տեղեկանք քարտարանի մասին ըստ հիմնական միջոցների տեսակների, բաժինների, պատասխանատու անձերի և կուտակիչ հաշիվների • Տեղեկանք մաշվածքի վերաբերյալ • Գործառնությունների մատյան ***Ապրանքանյութական արժեքներ* ենթահամակարգի համառոտ նկարագրություն**					

		Ապրանքանյութական արժեքներ համակարգը թույլ է տալիս ցանկացած պահի դրությամբ տիրապետել նյութական արժեքների գտնվելու վայրի, ինքնարժեքի մասին տեղեկատվությանը: Համակարգը վարում է խմբաքանակային հաշվառում: Վերահսկում է օգտագործողների հասանելիությունը պահեստներում մնացորդ դիտելու, մուտքեր կամ ելքեր կատարելու համար: *Համակարգի հնարավորություններն են՝* • Ապրանքանյութական արժեքների հաշվառում պահեստներում • Ապրանքանյութական արժեքների վերագնահատում, հավելյալ ծախսերի հաշվառում, պաշարների գույքագրում • Արագամաշ առարկաների հաշվառում • Ի պահ հանձնված նյութական արժեքների հաշվառում *Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝* • Նյութական արժեքների մուտքի և ծախսի օրդերներ • Պահանջագրեր • Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր • Հավելյալ ծախսերի բաշխում՝ տարբեր մեթոդներով • Լիազորագրեր • Գույքագրման համեմատական ցուցակներ • Վերագնահատման և միջինացման կարգադրություններ *Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝* • Քանակա-գումարային մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը՝ ըստ պահեստների, նյութական արժեքների և խմբաքանակների • Կոնկրետ նյութական արժեքի շարժը – (Т-հաշիվ) • Գործառնությունների մատյան՝ պահեստներով, նյութական արժեքներով • Մուտքի / ելքի մատյան՝ խմբավորված ըստ մատակարարների / գնորդների ***Կադրերի հաշվառում* ենթահամակարգի համառոտ նկարագրություն** *Կադրերի հաշվառում* ենթահամակարգը նախատեսված է աշխատակիցների կադրային տվյալների փոփոխությունների պատմության հետևելու համար: Կադրերում կատարված կադրային փոփոխությունները ավտոմատ արտացոլվում են *Աշխատավարձ* ենթահամակարգում: *Համակարգի հնարավորություններն են՝* - Գրանցել աշխատակիցների անձնական տվյալները. • Ծննդյան ամսաթիվ, ծննդավայր • Սեռ, ընտանեկան վիճակ • Ընտանիքի անդամների տվյալներ (անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ) • Նույնականացման փաստաթղթի տեսակ, համար • Հանրային ծառայության համարանիշ • Հաշվառման և բնակության հասցեներ • Աշխատանքային գրքույկի համար • Կրթության տվյալներ (մասնագիտություն, դիպլոմի տվյալներ, գիտական կոչումներ) • Լրացուցիչ (զինապարտության վիճակ, հեռախոսահամարներ) - Գրանցել աշխատանքային պայմանագրերով սահմանված պայմանները և առաջադիմության փաստաթղթերի միջոցով հետևել դրանց փոփոխություններին. • Ստորաբաժանում • Պաշտոն • Աշխատավարձի դրույքաչափ • Փորձաշրջանի ավարտ					

- Պայմանագրի տեսակ, պայմանագրի գործողության ժամանակահատված
- Ստանալ կազմակերպության կառուցվածքային միավորների (ստորաբաժանումների) հիերարխիկ կառուցվածք
- Գրանցել հետևյալ գործողությունները
  - Ընդունման հրաման
  - Ազատման հրաման
  - Աշխատանքային պայմանագրեր
  - Գործուղման թերթիկներ
  - Բացակայության փաստերի, հանգստյան և տոն օրերին աշխատած ժամերի գրանցում
  - Տաբելի թերթիկի (հաճախումների) հաստատում
  - Արձակուրդի հրամաններ և պլանավորում
  - Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հրաման
  - Հավելումների հրամաններ
  - Պահումների հրամաններ
- Նկարագրել և հետևել հաստիքացուցակներին ըստ ստորաբաժանումների
- Ստանալ տարատեսակ հաշվետվություններ
  - Աշխատակիցների կադրային թերթիկներ
  - Հրամանների գիրք
  - Աշխատակիցների հաճախումների (տաբելների) փաստաթղթեր
  - Թեկնածուների կադրային թերթիկներ
  - Աշխատանքային առաջադիմություն
  - Աշխատակիցների ստաժի տվյալներ
  - Արձակուրդներ ըստ աշխատակիցների (ժամանակահատվածի համար հասանելի, օգտագործված և չօգտագործված օրեր, պահուստաֆոնդ ձևավորելու համար գումարների նախնական հաշվարկ)
  - Աշխատակիցների գործող աշխատավարձը
  - Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր
  - Աշխատակիցների շրջանառություն

Ծրագրում առկա հաշվետվությունների գեներատորը թույլ է տալիս նկարագրել և հետագայում ավտոմատ ստանալ տարատեսակ հաշվետվություններ:

Կադրերում հաստատված աշխատակիցների հաճախումների փաստաթղթերը ավտոմատ փոխանցվում են Աշխատավարձ համակարգին և հիմք են հանդիսանում հաշվարկ կատարելու համար: Կադրերում գրանցված փաստաթղթերի հիման վրա նկարագրվում են տպվող տեսքեր, որոնք հետագայում ավտոմատ ստեղծվում և կցվում են աշխատակցի քարտին:

Աշխատավարձի հաշվառում ենթահամակարգի համառոտ նկարագրություն

Աշխատավարձի հաշվառում համակարգի օգտագործումը և համակցումը *Կադրերի հաշվառում* համակարգի հետ կբերի մի շարք խնդիրների արդյունավետ լուծմանը: Համակարգը համապատասխանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի և կից ակտերի պահանջներին:

Աշխատավարձի հաշվառում համակարգը հնարավորություն է տալիս՝

- Նկարագրել կազմակերպությունում գործող հավելումները և պահումները
- Նկարագրել աշխատաժամանակի տեղեկագրերի (տաբելների) տեսակները (8 ժամյա, 4 օրյա, ժամավճար և այլն)
- Կատարել դրույթների համապատասխանեցում օրենսդրությանը (եկամտային հարկի և նպատակային սոցիալական վճարի սանդղակներ,նվազագույն աշխատավարձը և այլն)
- Հաստատել կադրային փաստաթղթերը

		- Գրանցել հետևյալ գործողությունները. • Աշխատավարձի հաշվարկ • Արձակուրդայինի հաշվարկ • Վերջնահաշվարկ (չօգտագործված արձակուրդի փոխհատուցման գումարի հաշվարկ) • Նպաստների հաշվարկ (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության և ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ և թաղման նպաստ) • Ամսվա ընթացքում մեկից ավելի վճարումներ - Կատարել ծախսերի ձևակերպումներ - Աշխատաժամանակի բաշխում - Դեպոնենտների մատյանի վարում - Ստանալ հաշվետվություններ՝ • Վճարացուցակներ • Վճարային տեղեկագրեր • Հաշվարկային թերթիկներ • Ամփոփ տվյալներ • Ամփոփ տվյալներ ըստ աշխատակիցների • Միջին ամսական տվյալներ • Փոխառության շրջանառություն • Հաշվարկային տվյալների շախմատաձև տեղեկագիր • Հաշվարկային տվյալներ՝ ըստ աշխատակիցների, ստորաբաժանումների, հավելումների/պահումների • Աշխատողի և քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցողի գրանցման հայտ Եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011194157
ՀՎՀՀ՝ 02506264

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

< Հայկական Ծրագրեր > ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1930030005130100
ՀՎՀՀ՝ 00807555

/ստորագրություն/

Հավելված N 2
« 12» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72511700/3	**ՀԾ-Ձեռնարկություն համակարգի Հաշվապահություն, Հիմնական միջոցներ և Ապրանքանյութական արժեքներ, Կադրեր, Աշխատավարձ ենթահամակարգերի ներդրումը 6 համակարգչի համար:**	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	**6700000**	**6700000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար)**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ
Քաղ. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական մասնաբաժին
Հ/Հ՝ 900011194157
ՀՎՀՀ՝ 02506264

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
< Հայկական Ծրագրեր > ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1930030005130100
ՀՎՀՀ՝ 00807555

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 12» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած
ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված
ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման
ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 12» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

_____